


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 107562 գործարքներ, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 19.2%-ով:


2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ



իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 42715 օտարման գործարքների 86.1% կազմել են առուվաճառքները, 13.2%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 33.1% արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 34.9%՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 17.4%-ով: 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 11407 առուվաճառքի գործարքների 65.3% արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.2%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները

<i>Համայնքներ</i>	<i>Միջին գները /դրամ/</i>	
	<i>9 ամիսներ 2007թ.</i>	<i>9 ամիսներ 2006թ.</i>
Կենտրոն	440700	369900
Արաբկիր	354500	291100
Քանաքեռ-Զեյթուն	258200	176900
Նոր-Նորք	222300	165600
Ավան	210700	149100
Էրեբունի	219800	145400
Շենգավիթ	235000	176900
Դավթաշեն	241700	183000
Աջափնյակ	226900	165800
Մալաթիա- Սեբաստիա	214400	162500
Նուբարաշեն	122300	105300
<b><i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i></b>	<b>249700</b>	<b>190100</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ շինության շուկայական միջին գների աճը կազմել է 31.4%:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4521 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.2%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական

գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		9 ամիսներ 2007թ.	9 ամիսներ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	101000	60700
	Ապարան	28500	25300
	Թալին	35500	24000
Արարատ	Արտաշատ	80400	47100
	Մասիս	89900	56100
	Վեդի	58000	38700
	Արարատ	55200	40100
Արմավիր	Վաղարշապատ	122200	81400
	Արմավիր	87800	53200
	Մեծամոր	56700	34300
Գեղարքունիք	Սևան	58900	34600
	Գավառ	34000	24900
	Մարտունի	49800	38100
	Վարդենիս	25900	20200
	Ճամբարակ	14600	12700
Լոռի	Վանաձոր	69500	48000
	Ստեփանավան	34900	24100
	Սպիտակ	44500	32900
	Ալավերդի	24800	20100
	Տաշիր	24200	19800
	Թումանյան	5400	5200
	Շամլուղ	3000	2800
	Ախթալա	11500	10400
	Արցախ	139600	91400
Կոտայք	Նոր Հաճն	97100	62300
	Բյուրեղավան	69600	43400
	Եղվարդ	86900	57400
	Հրազդան	49000	35900
	Ծաղկաձոր	91000	70000
	Չարենցավան	58800	40100
	Գյումրի	67100	47800
Շիրակ	Արթիկ	43600	29700
	Մարալիկ	24900	21400
	Գորիս	69300	50500
Սյունիք	Կապան	63500	40800
	Միսիան	51200	33600
	Մեղրի	37200	27000
	Ազարակ	24000	19300
	Քաջարան	31700	24400
	Դաստակերտ	6800	6400
	Վայոց Ձոր	Վայք	57700
Եղեգնաձոր	71000	53100	
Ջերմուկ	103000	60500	
Տավուշ	Դիլիջան	64700	42000
	Իջևան	85700	50700
	Բերդ	33400	28800

	Նոյեմբերյան	27600	17000
	Այրում	18900	18000

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների աճը կազմել է 47.1%:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 4693 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1026, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3667: 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 19.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 10.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 22.6%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/	
	9 ամիսներ 2007թ.	9 ամիսներ 2006թ.
Կենտրոն	451500	380200
Արաբկիր	363200	297300
Քանաքեռ-Զեյթուն	262200	179800
Նորք-Մարաշ	225800	186100
Ավան	214400	151800
Էրեբունի	224200	148700
Շենգավիթ	238200	179200
Դավթաշեն	246800	185300
Աջափնյակ	230900	168300
Մալաթիա-Սեբաստիա	217500	165200
Նուբարաշեն	125400	107400
<b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b>	<b>254600</b>	<b>195400</b>

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 30.3 %:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժներն ունեն աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/	
		9 ամիսներ 2007թ.	9 ամիսներ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	104000	63300
	Ապարան	32400	26900
	Թալին	38300	25200
Արարատ	Արտաշատ	83300	48300
	Մասիս	93100	57300
	Վեդի	60900	39900
	Արարատ	58900	41200
Արմավիր	Վաղարշապատ	125400	82600
	Արմավիր	90400	54300
Գեղարքունիք	Սևան	61200	38900
	Գավառ	37200	26100
	Մարտունի	52700	39500
	Վարդենիս	29700	21800
	Ճամբարակ	17300	14300
Լոռի	Վանաձոր	73600	49300
	Ստեփանավան	38200	26800
	Սպիտակ	48100	34300
	Ալավերդի	28200	21500
	Տաշիր	26800	21300
	Թումանյան	8000	6800
	Շամլուղ	5300	4300
	Ախթալա	14000	11900
Կոտայք	Աբովյան	144100	93300
	Նոր Հաճն	101800	63400
	Բյուրեղավան	72200	44500
	Եղվարդ	90700	58400
	Հրազդան	52300	37200
	Ծաղկաձոր	118800	71400
	Չարենցավան	61300	41300
Շիրակ	Գյումրի	71200	49400
	Արթիկ	46000	30900
	Մարայիկ	27500	23400
Սյունիք	Գորիս	72300	51800
	Կապան	66300	41800
	Սիսիան	54500	34800
	Մեղրի	39900	28200
	Ազարակ	26500	20900
	Դաստակերտ	9500	8600
Վայոց Ձոր	Վայք	60400	35900
	Եղեգնաձոր	73600	54400

	Ջերմուկ	51200	35500
Տավուշ	Դիլիջան	67800	43000
	Իջևան	88200	51600
	Բերդ	36200	30000
	Նոյեմբերյան	30400	18100
	Այրում	20100	19200

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 49.7 %:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 17396 միավոր /13371.71 հա/ հողեր, որից Երևանում՝ 1262 միավոր /165.25 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն օտարվել են 894 միավոր /180.00 հա/ հողեր, որից Երևանում՝ 425 միավոր /40.21 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 7485 միավոր /11988.80 հա/, որից Երևանում՝ 44 միավոր /9.12 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 6364 միավոր /599.94 հա/, որից Երևանում՝ 820 միավոր /95.46 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 3209 միավոր /406.46 հա/, որից Երևանում՝ 369 միավոր /50.27 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 182 միավոր /241.45 հա/, որից Երևանում՝ 29 միավոր /10.40 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 140 միավոր /132.54 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 16 միավոր /2.52 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 16336 միավորի /12937.99 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1171 միավոր /157.22 հա/, նվիրատվության գործարքներ՝ 955 միավոր /411.99 հա/, որից Երևանում՝ 57 միավոր /5.56 հա/ և փոխանակության գործարքներ՝ 105 միավոր /21.73 հա/, որից Երևանում՝ 34 միավոր /2.46 հա/:

Հանրապետությունում 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 29.3%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 21.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 38.6%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ նվազել է 39.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 4956.85 հա, որից 4874.81 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 40.6%-ը կամ 6631 գործարքներ /6681.82 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 402 միավոր /53.08 հա/, իսկ 59.1%-ը կամ 9659 միավորը /6208.50 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 750 միավոր /103.15 հա/: 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 46 գործարք /47.67 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՍՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	22	9.15	154	14.37	226	29.55	38	7.95	7	1.25	593	75.11	112	18.84
Արագածոտն	464	1739.40	7	2.56	33	4.47	148	6.20	533	668.78	0	0.00	447	43.12	28	1.19
Արարատ	342	538.65	34	11.60	520	49.59	294	11.01	826	425.38	4	0.44	714	63.66	36	2.10
Արմավիր	447	2243.56	21	2.50	40	2.95	140	4.18	919	2631.25	3	0.20	811	70.13	54	2.08
Գեղարքունիք	88	198.73	5	5.73	63	12.54	291	33.93	183	175.79	0	0.00	114	15.05	23	3.70
Լոռի	85	107.16	5	0.20	58	4.55	268	20.71	405	393.38	5	138.07	82	9.87	50	2.63
Կոտայք	622	904.21	23	11.30	203	18.22	545	63.21	1253	746.89	6	16.55	1381	126.63	106	20.12
Շիրակ	39	32.68	8	33.37	232	8.33	180	7.81	152	179.48	1	0.03	62	5.77	23	1.14
Սյունիք	22	40.27	7	0.78	6	0.37	119	6.24	89	92.63	1	0.16	27	2.78	26	0.84
Վայոց Ձոր	83	253.20	0	0.00	25	1.91	201	77.19	76	87.18	0	0.00	49	4.98	19	36.29
Տավուշ	56	15.74	17	6.88	154	11.75	216	30.06	247	107.88	4	0.43	100	8.26	26	7.96
Ընդամենը	2248	6073.60	149	84.07	1488	129.05	2628	290.09	4721	5516.59	31	157.13	4380	425.36	503	96.89

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակ կան կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	271	33.97	22	9.15	65	3.25	184	21.57	131	19.11	0	0.00	0	0.00	89	11.12	42	7.99
Արագածոտն	23	0.52	2	0.23	0	0.00	21	0.29	629	1752.10	464	1739.40	5	2.33	33	4.47	127	5.90
Արարատ	65	1.19	2	0.35	6	0.22	57	0.62	1124	589.65	341	518.65	32	11.25	514	49.37	237	10.38
Արմավիր	43	1.89	5	1.25	2	0.21	36	0.43	594	2240.98	436	2233.25	16	1.25	38	2.74	104	3.74
Գեղարքունիք	58	15.73	3	0.30	4	4.25	51	11.18	389	235.20	88	198.73	2	5.43	59	8.29	240	22.75
Լոռի	12	0.22	0	0.00	3	0.11	9	0.11	404	132.40	85	107.16	5	0.20	55	4.44	259	20.60
Կոտայք	84	13.41	6	6.12	21	2.49	57	4.80	1306	979.46	619	900.13	17	5.18	182	15.74	488	58.41
Շիրակ	52	34.16	2	32.08	11	0.26	39	1.82	407	48.03	39	32.68	6	1.29	221	8.07	141	5.99
Սյունիք	28	3.16	5	0.69	3	0.18	20	2.29	126	44.48	22	40.27	2	0.08	3	0.18	99	3.95
Վայոց Ձոր	24	4.02	0	0.00	0	0.00	24	4.02	285	328.28	83	253.20	0	0.00	25	1.91	177	73.17
Տավուշ	120	5.80	10	4.26	18	0.73	92	0.81	319	56.66	52	13.77	7	2.62	136	11.02	124	29.25
Ընդամենը	780	114.07	57	54.43	133	11.70	590	47.94	5714	6426.35	2229	6037.24	92	29.63	1355	117.35	2038	242.13

Հանրապետությունում 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 19 գործարքներ /36.36 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2006թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 69.3%: Ընդ որում Երևանում աճել է 56.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 57.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 42.4%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 60.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 2.1 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 2.1 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների						Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների					
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին		
<b>Արագածոտնի մարզ</b>												
Աշտարակ	411	1282.58	34.1	12381.8	530.5	367	354.23	362.2	6772.5	2583.3		
Սպարան	6	62.67	26.8	269.1	77.3	35	25.97	90.6	767.6	361.3		
Թալին	47	394.15	33.9	756.0	84.6	100	244.38	90.6	758.5	376.1		
Ծաղկահովիտ						18	28.85	77.0	948.2	168.2		
<b>Արարատի մարզ</b>												
Արտաշատ	144	141.84	34.8	2676.2	1167.8	334	151.21	335.1	5418.0	1405.6		



Մասիս	65	92.82	29.9	2400.0	458.8	176	86.30	181.1	6772.5	1787.8
Վեդի	132	283.99	31.7	3057.6	603.5	306	185.13	203.8	4515.0	1197.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	110	552.35	15.1	1537.9	111.5	225	363.83	294.3	4063.5	889.2
Բաղրամյան	161	1271.11	20.3	622.1	119.0	219	1966.25	90.6	677.3	557.6
Վաղարշապատ	165	409.79	26.9	2464.0	291.3	442	276.81	443.7	9030.0	1506.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	16	16.23	96.8	236.3	162.0	87	60.22	190.2	496.7	362.4
Ճամբարակ	14	37.21	117.0	787.0	325.3	19	17.82	45.3	541.8	147.3
Մարտունի	2	0.40	1155.0	2442.0	1798.5	17	3.64	45.3	1806.0	468.7
Սևան	11	98.44	327.6	494.8	433.7	12	9.21	45.3	451.5	191.7
Վարդենիս	45	46.45	184.2	700.0	381.2	48	84.89	27.2	532.8	241.6
Լոռու մարզ										
Այվերդի	67	68.36	210.0	1002.7	420.2	248	125.13	163.0	2483.3	1045.4
Գուգարք	11	27.43	194.3	740.0	511.6	38	28.49	226.4	2709.0	924.4
Սպիտակ	2	2.60	130.0	1140.0	635.0	14	7.29	226.4	1490.0	509.7
Ստեփանավան	4	6.18	450.0	2112.0	1297.7	43	169.04	90.6	2257.5	358.7
Տաշիր	1	2.60	740.0	740.0	740.0	51	49.57	45.3	451.5	202.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	246	256.12	34.6	5700.0	555.5	487	174.66	271.7	11287.5	3259.2
Եղվարդ	273	531.52	34.6	8010.0	448.9	632	405.70	172.1	11287.5	2304.7
Հրազդան	100	112.48	54.8	1762.5	305.8	122	163.19	113.2	2709.0	900.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	10.06	14.1	314.6	163.4	70	65.55	249.0	1693.1	444.0
Ամասիա						15	43.54	36.2	237.0	112.0
Անի	9	8.21	77.2	1736.2	291.8	42	39.81	108.7	361.2	233.8
Աշոցք						12	16.64	45.3	165.0	115.7
Արթիկ	22	14.42	102.1	1741.2	333.8	10	7.31	63.4	1083.6	169.4
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.50	760.0	760.0	760.0	24	39.38	90.6	673.3	336.7
Կապան	17	37.57	180.0	4800.0	1221.4	7	4.58	54.3	841.6	223.1
Մեղրի	1	0.20	1000.0	1000.0	1000.0	35	16.12	181.1	1784.2	467.5
Միսիան	3	2.00	792.0	792.0	792.0	23	32.54	45.3	631.2	222.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	53	195.68	32.8	928.0	235.6	53	65.82	117.7	2524.8	1276.5
Վայք	30	57.52	19.6	587.9	183.3	22	21.18	54.3	1430.7	507.6
Տավուշի մարզ										
Բերդ	2	0.40	361.4	496.1	428.8	66	20.03	45.3	841.6	349.5
Իջևան	45	9.84	120.0	2331.0	714.7	29	13.67	240.0	1683.2	802.0
Նոյեմբերյան	5	3.53	217.7	2655.0	1022.6	151	74.06	45.3	3509.5	511.1

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Սրբավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	29	39084.0	112.7	2520.0	370.4	409	371765.0	113.2	3612.0	2272.1
Ապարան	1	457.0	122.1	122.1	122.1	17	24540.0	113.2	632.1	189.3
Թալին	3	5203.0	113.7	116.6	115.2	17	29155.0	45.3	361.2	91.8
Ծաղկահովիտ						4	5770.0	45.3	361.2	68.8
Արարատի մարզ										
Արտաշատ	286	290150.0	113.8	1056.0	304.7	173	180528.0	135.8	2709.0	877.4
Մասիս	162	142323.0	57.2	1741.7	603.5	404	308320.0	135.8	9030.0	1117.6
Վեդի	66	61185.9	173.7	1171.3	621.5	128	137341.0	113.2	993.3	638.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	4773.0	105.9	2061.8	941.5	173	174121.8	135.8	2257.5	1057.3
Բաղրամյան						12	13940.0	81.5	270.9	127.5
Վաղարշապատ	33	22644.0	249.5	3828.0	2863.2	621	508432.0	135.8	4515.0	1417.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	54.0	1296.3	1296.3	1296.3	22	30441.0	135.8	903.0	348.6
Ճամբարակ	1	1000.0	90.0	90.0	90.0	9	11644.0	45.3	135.5	94.8
Մարտունի	49	76024.0	42.5	157.3	75.1	44	58781.0	90.6	451.5	226.5
Սևան	6	3800.0	187.4	434.8	335.2	19	21287.3	90.6	903.0	142.2
Վարդենիս	2	2000.0	175.0	175.0	175.0	20	28393.0	45.3	225.8	103.4
Լոռու մարզ										
Ալավերդի						19	27110.0	67.9	270.9	121.9
Գուգարք	37	30479.0	67.0	10900.0	2487.7	37	44608.6	67.9	2347.8	532.7
Սյիտակ	6	3700.0	55.2	528.0	281.3	11	12840.0	63.4	451.5	120.7
Ստեփանավան	12	10241.0	75.6	277.2	155.9	12	12415.0	45.3	270.9	98.9
Տաշիր						1	750.0	45.3	135.5	67.9
Կոտայքի մարզ										
Արույան	94	88743.0	276.0	2425.0	1629.7	655	576985.9	135.8	6772.5	1716.9
Եղվարդ	47	36514.0	172.0	4749.0	2306.3	594	564830.0	135.8	6772.5	1849.1
Հրազդան	41	32110.0	121.1	9912.5	1209.4	121	113839.5	135.8	9030.0	1205.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	150	40895.2	126.0	23333.3	6025.7	38	28671.3	113.2	1535.1	320.4
Ամասիա						1	1000.0	45.3	135.5	68.5
Անի	1	2543.0	115.4	115.4	115.4	7	8352.0	67.9	180.6	95.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	70	37237.0	28.8	900.0	230.2	16	19630.0	67.9	925.6	155.3
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	1200.0	1200.0	1200.0	7	5751.0	67.9	541.8	229.1
Կապան	2	1239.0	475.0	5363.6	2919.3	6	3605.0	67.9	632.1	198.2
Մեղրի						9	10860.0	67.9	406.4	112.7
Սիսիան						5	7550.0	67.9	406.4	133.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	18380.0	75.6	1150.0	391.4	40	40018.0	67.9	1128.8	276.0
Վայք	1	700.0	447.9	447.9	447.9	7	8180.0	77.0	632.1	115.2
Տավուշի մարզ										
Բերդ						5	1746.0	45.3	632.1	83.9
Իջևան	135	110152.0	79.2	2300.0	1363.0	82	66767.0	67.9	1354.5	389.6
Նոյեմբերյան	1	32.0	446.6	446.6	446.6	12	14020.0	45.3	632.1	124.6

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 18 գործարքներ 2.96 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ Գեղարքունիքի /0.35 հա/, 6-ը՝ Լոռու

/0.37 հա/, 2-ը՝ /0.10 հա/ Կոտայքի և 1-ական՝ Արարատի /0.10 հա/, Սյունիքի /0.20 հա/, Շիրակի /1.84 հա/ մարզերում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7414 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 29.6% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 22.1%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 640 բնակարանների, 265 անհատական բնակելի տների, 2527 հասարակական, 348 արտադրական նշանակության օբյեկտների, 3591 միավոր /28452.67 հա/ հողերի, 42 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 215 վարձակալության գործարքների, այդ թվում 154 միավոր /8.89 հա/ կառուցապատման իրավունքով, քանակները 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել են 43.3%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 28452.67 հա հողերից 36.19 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 28416.49 հա հողերի 98.20 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 32.77 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 14726.60 հա, որից 2502.69 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6135.85 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<b>Մարզի անվանումը</b>	<b>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>		<b>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</b>	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	7	1140.00	293	1525.68
Արարատ	12	362.00	144	371.99
Արմավիր	0	0.00	56	241.49
Գեղարքունիք	147	2453.46	360	1148.63
Լոռի	2	270.00	466	2092.88
Կոտայք	5	600.00	115	182.07
Շիրակ	4	30.00	362	1706.78
Սյունիք	14	1054.55	95	1448.14
Վայոց Ձոր	0	0.00	30	266.90
Տավուշ	2	225.84	44	125.91
<b>Ընդամենը</b>	<b>193</b>	<b>6135.85</b>	<b>1965</b>	<b>9110.47</b>

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 17245 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 85.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.5%, հասարակական նշանակության օբյեկտների /10.5%, առանձնատների /25.2%/ և հողերի /11.1%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6996 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 44.5%-ով:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 5563.15 հա մակերեսով հողեր, որից 73.16 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 91.7% կամ 5101.06 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.94 հա: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 3044.25 հա, որից 3042.25 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 55 և 32 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 68.5%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /20.7%:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 17880 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2006թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 18.6%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.2%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***